

ՀՆՁՍԱԿ

ՍԱՍՈՒՆԻ ԱՊՍՏԵՄԲՈՒԹԻՒՆԸ ԹՕԿԱԴԻ ԿՌԻՒԸ.

ՀՆՁՍԱԿԸՆ ԿՌԻՍՏԵՑՈՒԹԵԱՆ ՄԵՄՈՒԸ

ԼՕՆԴՈՆԻՄ.

Սուլթանի վայրենի կառավարութեան կատաղի հալածանքները, նրա ստոր գործակալների միջոցով մի քանի անգամ կատարած գողութիւնները «Հնչակի» տպարանում և Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնի ու Հնչակեան մամուլի խմբագրութեան անդամների կեանքի դէմ արած սպանութեան փորձերը, նրա բազմաթիւ լրտեսների խմբերը, վերջապէս նրա անընդհատ դիմումները հելլեն կառավարութեան՝ մեզ Յունաստանից արտաքսելու պահանջով — այդ բոլորը Հնչակեան մամուլի գործի, մեր հանդէսների կանոնաւոր ու ազատ հրատարակման առջեւ ստեղծեցին մեծամեծ խոչնդոսներ: Այդ խոչնդոսների դէմ մենք մաքառեցինք գրեթէ ամբողջ երեք տարի, այսինքն սկսած այն օրից, երբ «Հնչակի» տպարանը փոխադրվեցաւ Աթէնք: Իրերի այդ գրութիւններն, ի հարկէ, երկար տեւել չէր կարող և մենք, ապահովացնելու համար Հնչակեան Կուսակցութեան մամուլի ազատ հրատարակումը, հարկադրվեցանք «Հնչակի» տպարանը հաստատել մէկ աւելի ազատ ու ապահով վայրում: Այդ վայրը՝ Լոնդոնն է: Այսուհետեւ «Հնչակը» հրատարակելով երկու շաբաթը մէկ անգամ, որպէս նաև ամեն ջանք գործ դնելով լրացնելու «Ապտակի» և «Գաղափարի» պակաս համարները, մենք կը շտապենք գոհացնել մեր ընթերցողներին և անգգաւի դարձնել մեր երեք հանդէսների հրատարակման երկամսեայ ահամայ դադարը, որ անհրաժեշտ էր տպարանի փոխադրութեան համար Աթէնքից Լոնդոն: Թող վստահ լինեն մեր բազմաթիւ կուսակիցներն ու բարեկամները, որ ոչ մի թիւրքական հալածանք, որքան նա խիստ լինի, երբէք չէ կարող մեզ արգելք լինել բարեխղճաբար, անձնուիրութեամբ ու եռանդով միշտ կատարելու մեզ յանձնած և մեր ստանձնած ծանր ու պատասխանատու, բայց և քաղցր ու սուրբ պարտականութիւնները, մեր բոլոր պարտականութիւնները:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ.

ՍԱՍՈՒՆ.

Սասունը պատերազմի մէջ է. Սասունն արեան մէջ է. Սասունցին կոտորում է. Սասունցին կոտորվում է: Դէպքերը յաջորդում են միմեանց և Սասունի պաշարված վիճակը ոչ միայն մնում է նոյնութեամբ, այլ աւելի ևս խստանում է. թիւրքական հազարաւոր զօրքեր և քիւրդերի այլ և այլ գնդեր անդադար ուղարկվում են կատաղի արշաւանքով ապստամբ Սասունի վրայ:

Յանդուգն ու հաստատուն, ինչպէս իր լեռների հըպարտ ապառաժները՝ Սասունցիի սիրտը թրթռաց պատերազմի կոչից: Ապստամբ վիճակում երկու տարիից ի վեր՝ Սասունցին այսօր իր ընդհանուր ապստամբութեան աղաղակով է անվախ նետվում սուլթանական սուլիների ծայրը: Մահի ճանապարհով դէպի կեանք, Ապստամբութեան ճանապարհով դէպի Ազատութիւն — Սասունցիի նշանաբանն է: Եւ այնտեղ, Սասունի գոռող լեռների տակ, սուլթանի թնթանօթների լիաբաց, խոր, մթին, կլանելու պատրաստ բերաններն անհամբեր սպասում են իրանց համեղ պատառին: Բայց ի՞նչ կայ. աներկիւղ ու ոգեւորված կանգնել այդ սոսկալի գործիքի դիմաց թէկուզ հէնց մի րոպէ և այդ րոպէում իրան զգալ ազատ, բոլորովին ազատ — շատ աւելի քաղցր է, քան հարկաւոր տարիների ստրկական կեանքը:

Սասունցին այդ գիտէ, և դա է, այդ գիտակցութիւնն է կազմում նրա յոժը, նրա հերոսութիւնը: Մահի պարտութիւն — գոնէ. բայց չէ՞ որ ստրկութիւնն էլ այսպէս կամ այնպէս, պէտք է իր վերջն ունենայ: Եւ պատերազմում պէտք է լինել ինչպէս պատերազմում. նա, որ դէպի յետ շրջեց իր դէմքն ու կուրծքը, նա չունի իրան բաժին գէթ հերոսական պարտութեան բարոյական յաղթանակը:

Այս րոպէիս, երբ արիւնը տակաւին հոսում է Սասունի մէջ, մի պարտականութիւն է ընկնում ամեն մի հայի վրայ: Այդ պարտականութիւնն է՝ որոնել միջոցներ օգնութեան հասնելու այդ քաջարի լեռնցիներին, որ այնպիսի հերոսութեամբ պատերազմում են և այնպիսի արժանաւոր կերպով պաշտպանում հայ ժողովը:

դային դատն ու նրա պատիւը: Թւում է, որ հայ հասարակութիւնը սկսել է հասկանալ իր այդ պարտականութիւնը Սասունցիների վերաբերութեամբ, բայց որքան ուշ: Սակայն ուղղակի օգնութեան համար հանգամանքներն այսօր այնքան բարդվել են, այնքան անյարմարութիւններ ու դժուարութիւններ ստեղծվել երկրի պատերազմական դրութեան շնորհիւ, որ օգնութեան խնդիրը շատ աւելի խճճվել է ու դարձել դժուարալուծելի: Մինչդեռ Սասունցիների ապստամբութիւնն իսկապէս ոչ թէ պէտք է նկատել իբրեւ մի բուն տեղական նշանակութիւն ունեցող դէպք, այլ նա յայտնի կերպարանք ու կարեւորութիւն է տալիս հայկական դատին ընդհանրապէս: Հետեւաբար, պարզ է, թէ հէնց նոյն իսկ հայ ժողովրդային դատի ընդհանուր տեսակէտից ամեն ջանք պէտք է գործ դնել օգնութիւն հասցնելու: Բայց պարզ է նոյնպէս, որ Սասունի ապստամբութիւնը բոլորովին տարբեր ու բարեպատեհ հանգամանքներում կը լինէր, եթէ նրան օգնութիւն հասցրած լինէին այն ժամանակ, երբ հրաւեր էր կարգացվում հայ հասարակութեան: Չունենալով ոչ մի քաղաքական կրթութիւն, իսկապէս բոլորովին անտարբեր դէպի յեղափոխական գործը, ժամանակ առ ժամանակ միայն բողոքապէս դրդվելով որ և է ականաւոր դէպքից և վերաբերվելով դէպի գործը ինչպէս թատրոնական գործի սիրողը դէպի թատրոնը — հայ հասարակութիւնը խուլ ու մունջ գտնվեցաւ մեր աւելի, քան երկու տարւայ ընթացքում արած սփառակից հրաւերներին ամեն կերպ օգնել Սասունցիներին: Բւելի ևս, քանիցս մեր ընկերները Սասունից և Սասունցիները դիմումներ են արել, իրանց օգնելու հրաւերներ են կարգացել — միշտ կրկին և կրկին ապարդիւն: Հայ հասարակութիւնն այդ ամեն, կարող ենք ասել, օրհասական աղաղակներին պատասխանում էր զարմանալի անտարբերութեամբ՝ միախառնված արհամարհանքի ու մերժման հետ: Եւ — սոսկալի՝ հեղեղութիւն — այսօր, երբ, ինչպէս ասում են, «բանը բանից անցել է», հայ հասարակութեան մէջից լսվում են ձայներ՝ օգնութեան հասնել ապստամբներին: Ահա դուք յանկարծակի փափկած սրտեր, փրաղաբանութեամբ պարապվող ժամանակաւոր հայրենասէրներ, ուր էիք դուք և ի՞նչ էիք անում այն ժամանակ, երբ ամբողջ երկու տարւայ ընթացքում իր արիւնաթաթախ ձեռքերը Սասունցին անգաբար ուղղում էր դէպի ձեզ և արիւնափրփուր բերանով օգնութիւն աղերսում, մինչդեռ միևնոյն ժամանակ մի դադանային կառավարութիւն հարկւրաւոր տղամարդիկ, կիներ ու երեխաներ էր խեղդում արեան մէջ և պատրաստում Սասունի անկման վիճը...

Եւ սակայն հայ հասարակութիւնը, քանի որ ուշացրել է իր օգնութիւնը մինչև այժմ, գէթ այսօր պէտք է մտածէ ներկայի ստեղծված հանգամանքների համեմատ

օգնութեան հասնելու ապստամբ քաջերին: Պէտք է նա անի ինչ կարող է և ինչպէս կարող է, և այդպիսով էլ գէթ մասամբ կը սրբէ իր ճակատից այն արիւնը, որ ցայտել է նրա վրայ թիւրքի սուլինով պատուած քաջ Սասունցիի սրտից: Կերկայ հանգամանքներում ամեն ջանք պէտք է լինի՝ որքան կարելի է արագէք լինել թիւրքական զօրքերի առաջխաղացման Սասունի վրայ և դրանց աւելի ու աւելի մեծ քանակութեամբ համախուժվելն ապստամբների գլխին: Դա մի կողմից, միւս կողմից պէտք է աշխատել թիւրք կառավարութեան կենտրոնացած ճիգերն ու բռնած ընթացքը գլխի մինչև մի յայտնի աստիճան հեռացնել ապստամբ վայրերից: Այդ երկու նպատակին հասնելու միակ հնարն այն է, որ պէտք է շուտով առաջ մղել ու կատարել յեղափոխական ասպատակային խմբերի գործունէութիւնը յարմարաւոր վայրերում՝ մի կողմից և Հայաստանի ուրիշ, մէկ, երկու և աւելի տեղերում՝ հայկական առաւել կամ պակաս ծաւալ ունեցող շարժումներ առաջացնել՝ միւս կողմից: Խօսք չը կայ, որ դրանով հանդերձ ոչ մի ճիգ չը պիտի խնայել նիւթական մեծ օգնութիւն հասցնելու համար Սասունցիներին:

Այսպէս, մեր անելիքը շատ պարզ է ու որոշ, թէ եւ դժուար: Բայց այդ միջոցներն են, միայն մնացել որ ստեղծվել են ներկայումս Սասունում տիրող հանգամանքներից ու դէպքերից: Չասնիք թէ դժուար է և չը մնանք անգործ: Կատարելու համար մեր պարտականութիւնը, ամբողջ պարտականութիւնը՝ պէտք է առանց տատանման ու շօթահայեաց կերպով ձեռք զարնել այն վերջին վճռական միջոցներին, որ այսօր կարող ենք և պէտք է ջանանք ունենալ մեր տրամագրութեան տակ: Թող գործեն, շարժվեն հայերն ուր որ կարող են և ինչպէս որ կարող են, միշտ սակայն կարելիին չափ աշխատելով նորանոր խոչնդոտներ չըստեղծել առհասարակ յեղափոխական Գործի ընդհանուր ընթացքի ու զարգացման առջև — դա է վերջին օգնութիւնը, որ աղերսում է արիւնաթաթախ Սասունը:

Հայ հասարակութիւնն ամեն ճիգ պէտք է թափէ, որ Սասունի քաջ ապստամբութեան զանգակի յանդուգն զօղանջն ապագայում չը որոտացնէ իր ականջին նոյն իր, հասարակութեան, անպէտքութիւնն ու ստորութիւնը և որ դադանի ձեռքով սպանված Սասունցիի արիւնը, հպարտ ու ազատաշունչ կերպարանքը չը դառնայ այնպիսի սոսկալի ուրուական, որ կը հայածէ միշտ նրա, հասարակութեան, խիղճը, պատճառելով նրան մըշտական տանջանք ու դառն զղջում և գլորելով նրան անջընջելի ամօթի մէջ:

Թ Գ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ե Ե Ե Բ

ՆԱԽԱԿՆԵՐ ԹԻՒՐ-ԲԵՆՍԵՅ

ՍԵՍՈՒՆԻ ԱՊՍԵՍԵՐՈՒԹԻՒՆԵՐ

Սասնոյ կողմերէն, 23 օգոստոս, 1894.

Մենք մեր առաջին թղթակցութիւններով յայտնած էինք թէ ինչ դառն աղէտ կապառնայ ապագային Մշոյ դաշտին, խնուսին, բասէնին եւ Սասունին. մեր այդ նախագուշակութիւնները իրականացան: Թէ Մշոյ դաշտը եւ թէ Սասունը կրակի եւ արեան մէջ են այսօր: Ես առ այժմ համառօտ կերպով գրելով՝ ապագային կը թողում ընդարձակ տեղեկագրութիւնը: Յուշիս ամսոյ վերջերը բրդերը բշեցին, տարին Սասնոյ Շէնիկ գիւղի ամբողջ նախիրը: Շէնիկցիներն իրենց դրացի գիւղացիներու հետ միացած հետեւեցան բրդերու եւ յարձակուելով անոնց վրայ յաջողեցան ետ խլել նախիրը: Կռուին մէջ երեք քիւրտ սպանուեցան:

Գիւղացիներու այս յանգագնութիւնը եւ աւաղակներուն պարտութիւնը կատաղեցուց շրջակայ քիւրտ ցեղերը, որոնք անհամար բազմութեամբ, միացած բաւական թուով թիւրք կտնոնաւոր զօրքերու հետ սկըսան գիմել դէպի Շէնիկ, որ ապստամբ հռչակուած կը նկատուէր այլ ետ: 2ը նայելով պաշտպանութիւնը անթիւ բազմութեան, որոնք գրեթէ 15-20,000 ի կը հասնէին, Շէնիկցիք վճռեցին մինչեւ վերջ դիմադրել: Բրդերը ամբողջ վեց օր գիշեր-ցորեկ յարձակում գործեցին, սակայն քաջ գիւղացիները միշտ ետ մղեցին: Վերջին օրուան յարձակումը ամենազօրեղն էր, բայց դարձեալ առաջիններու բաղդին արժանացաւ: Այդ կռիւներու մէջ կիները մեծ դեր կատարեցին, երկէ մարդերու հաւասար եւ աւելի կատաղութեամբ կռուեցան: Երբ յաղթուած քիւրտերը ամօթահար սկսան ետ քաշուիլ, Շէնիկցիք դուրս եկան իրենց ամբողջ թիւներէն եւ բոլոր ուժով ընկան թշնամու վրայ: Այս վերջինս շիթութեամբ շատ մը դիակներ թողելով կռուի դաշտին վրայ սկսաւ փախչել: Այս կռուի ժամանակ Սասունցիներէ ետքը երկէ մարդ եւ մէկ կին սպանուած են:

Վիւրտերը դիմեցին Մուշի փաշային, որ արդէն պատրուակ մը կը փնտռէր, եւ խնդրին տալով մի ծանր կերպարանք ճամբայ հանեց շատ մը զօրքեր չորս թնդանօթներով, որոնց միացան յաղթուած քիւրտերը ուրիշ շատ մը ցեղեղով: Սա առաջին պատճառն էր Սասունի պաշարման: Գանք մէկ երկրորդին:

(Չոքտուսի սկիզբները կառավարութիւնը սկսաւ նորոգել Մազէ-Կամուրջը, որ անցած տարի կռուի ժամանակ Սասունցիք քանդած էին: Այդ շինութեամբ կարող էր նա դիւրութեամբ մտնել Սասուն: Տեղային բնակիչներն ընդգիմացան եւ արդեւեցին. ասկէ առաջացաւ կռիւ մը, եւ թիւրքերէն 12-ի չափ մարդիկ սպանուեցան, կառավարութիւնը այն ատեն հրաւեր կարգաց բոլոր քիւրտ ցեղերուն՝ Սասունը աւելի համար: Այդ բացարձակ արտօնութեան վրայ քիւրտերը սկսեցին ամեն կողմէ հաւաքուիլ եւ ահագին

բազմութեամբ դիմեցին Սասուն. ամեն կողմէն պաշարելով՝ սկսան դիշեր ցորեկ յարձակումներով բնաջինջ անել Սասունը: Սասունցիք զգալով իր օրհասական վիճակը, իր բոլոր ոյժով սկսաւ դիմադրել եւ այնպիսի սարսափ աղբեց վայրենի պաշտպաններուն, որ շիթութեամբ սկսեցին այս ու այն կողմ փախչել՝ 5-600 մեռեալ եւ վիրաւոր թողելով պատերազմի դաշտին վրայ: Իր քաջ համարիչներու պարտութիւնը տեսնելով կառավարութիւնը ամեն կողմերէ զօրքեր հաւաքեց եւ Սասունը պաշարեց. միակ կարինէն մօտ 3,000 զօրք հասած են իրենց թնդանօթներով: Մուշէն, Բաղէշէն, Վանէն 1,000 էն աւելի, 15 թնդանօթներով: ասոնց հետ միացած են նաեւ բազմաթիւ քիւրտեր, իրենց պարտութեան վրէժը լուծելու համար: Այս ժամուս որ կը գրեմ կռիւը սկսած է ամեն կողմէն, մէկ կողմէն ծանր սովէն եւ զէնքի պակասութենէն, միւս կողմէն պատերազմի վճռական վայրկեանի պատրաստութենէն: Տանջուող ժողովուրդը երբէք չէ յուսահատած. արդէն երկու յարձակումներ ետ մղուեցան. զօրքերը եւ համարիչները երթալով կտուարանան. ամեն կողմէ յարաբերութիւններ կտրուած են: Սասունցիք ուխտած է մինչեւ իր վերջին շունչը կռուիլ մեռնիլ պատերազմի դաշտի վրայ, զէնքը ձեռքին, աղատութեան մէջ պատուաւոր կերպով քան թէ տանջուիլ ստրկութեան շղթայի առիկ:

ՍԱՆ:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԱՐՕՆՈՅ

(Շարունակութիւն *)

— Նոյն ամսոյ մէջ հետզհետեւ կը խուզարկեն Մարտի գիւղին մէջ Կատանի Ավագի, Ասօի եւ այլոց տները, Վարաբէօփրիւ գեղի մէջ Բէյս Կակօի, Մէլէի եւ այլ տները: Քաղքիկ գեղի մէջ Արթին աղա Տիրացուեանի տունը, Հարէ միկ գեղին մէջ Բէյս Մարգարի տունը: 2ը նայելով որ ոչինչ փնտսակար բան չեն գտներ, այնու ամենայնիւ կը ձերբակալեն Վարաբէօփրիւ Բէյս Մարտօն, Մարտիկի Կատանի Ավագը, Քաղքիկցի Արթին աղան աղայ Աւեքսանէֆ, եւ Հարէմիկցի Բէյս Մարգարը, զորս մի քանի օր պահելէ վերջ կը թողուն: Կերեւի փօլիս յիշեալ անձնաւորութեանց հետ զրամական հաշիւ մը կարգադրել կուզէր:

— Նոյնպէս կը ձերբակալեն բերդէն մղսի Կէւորեան խաչատուր Էֆէնտին, Վաչօի Սեդրակը եւ Բէշիչօղլուեանց Ստեփանը: Վերջին երկուքը ամբաստանուած են, իբր թէ ազգով ու կրօնքով Ռուս երկու թուրք զօրաց փախելու մասնակցած են, իսկ խաչատուր Էֆէնտին իբր թէ խալիլ շափու շահը կանխադուշութեան համար ըտեսութեան համար լրատուութիւն ըրած է: Յետոյ ոչ մի սուլացոյց չունենալով բոլորն ալ ազատ թողուցած են:

Մէկ կողմէ կառավարութիւնը, քուրդ տարրը, իսկ միւս կողմէ ալ սովը կը տանջէ հայ ժողովուրդը: Քաջ գիւղացիները որ օգուտ չի կայ, կառավարութեան դիմել,

*) Տես յէնչակ՝ Nr 8, 9, 10 եւ 11:

սակայն ճարահատեալ մնացած թշուառները հաւականա-
բար գիմում ըրած են տեղական կառավարութեան օգնու-
թիւն հասցնելու: Բայց նա ծիծաղելով կը նայի այդ
երեւոյթի վրայ: Ի՞նչ փոյթն է թէ հայ ժողովուրդ-
ը անօթութենէ կը մեռնի, կամ կը գաղթէ: Աշնա-
նէ ի վեր կը թոյլատրէ որ հայերը որքան կուզեն
գաղթեն, քանի որ միտք ունի անոնց տեղ թուրք
մուհաճիրներ (գաղթականներ) լեցունել:

Հայաստանի մէջ կան եւ ուրիշ կործանիչ պատ-
ճառներ, որք են փտած սովորութիւնք, որով առ հա-
սարակ հայերն իրենք իրենց տունը կը քանդեն: Օ-
րինակ, ամուսնական խնդրոց մէջ խալանի խնդիրը:
Ցաւալի է ըսել որ հայաստանցին աւելի հեշտ է
բռնակալի մը ձեռքէն ազատելը, քան թէ տեղական
վատ սովորութեանց աղբեցութենէն: Հայրը բացարձա-
կապէս կը ծախէ իւր աղջիկը փեսացուին, փեսան
ինչքան էլ համակրելի երիտասարդ լինի առանց խա-
լան, Ն Ը Լ Ղ ա տ (նուէր), Զ օ ք ա ն փ ե ռ թ (զօքան-
չի նուէրը), Ա Ղ Բ Ե Դ օ տ ի (հարսնեղբոր նուէրը),
եւ Խ ա հ ր է պ ու լ ն (հարսի բերեւէն առաջ զրկուե-
լիք տաւար կամ ոչխարը), տալու՝ չէ կարող հար-
սը տանել: Տղան որքան ալ աղքատ լինի գոնէ ա-
տոնցմէ մի քանիսը պարտի տալ, որք առնուածն 8-10
ոսկիի գործ են: Այդ քանդիչ սովորութեան պատ-
ճառաւ շատ ու շատ տները տնտեսապէս կը քայքայ-
ուին: Հատկապէս չամուսնանալով թշուառութեան են-
թակայ կը լինին: Ապստամբութեան հետ միասին յե-
ղ ա փ ո խ ու թ ի լ ն է հարկաւոր, եթէ ոչ մեր ըս-
պասած անդորրութիւնը չենք կարող վայելել արիւն-
հեղութենէ վերջ իսկ:

ՍԱԼ:

— 0 —

Խնուս, 1 ապրիլ 1894.

Ժ ո Ղ ո Վ ր դ ի վ ի ճ ա կ ը. կ առ ա վ ա ր ու լ -
թ ե ա ն հ ա լ ա ծ ա ն ք ը. ք ր դ ե ռ ու հ ա ռ ս տ ա -
հ ա ռ ու թ ի լ ն ն ե ռ ը: Ահա ապրիլ ամսոյ մէջ մը-
տանք, դեռ Խնուսը ձիւնապատ է, վեց թիւ թանձը-
րութեամբ ձիւն կայ Խնուսի դաշտին մէջ: Ժողովուրդը
տնտեսական կերպով ամեն բանէ զուրկ է. չը նայելով
հացի պակասութեան, որ այլ ևս անտանելի դարձած է,
վրայ հասաւ նաեւ անասուններու ուտելիաց պակասու-
թիւն. ժողովուրդը որ յոյս ունէր գարնան իր անասուն-
ներու կաթով և բանջարեղէններով ապրիլ այդ յոյսն
ալ ի դերեւ ելաւ. հետեւաբար հայ տարրն չսպասելով
գարնան գալստեան այս օրէն սկսած է իր զաւակներով
այս ու այն կողմ գաղթել: Խնուսի և Բասէնի ճանա-
պարհներուն վրայ անօթութենէ մեռնողներու դիակներ
գտնուած են. օրինակ Խնուսի գայմագամահիստ Բերդ ա-
ւանի մէջ վեց քրդեր կառավարութեան դռան առջեւ
մեռած են քաղցէն. Աղվէրան կոչված քրդաբնակ գիւ-
ղի լեռներուն վրայ քրդուհի մը մեռած է. Խնուսի Հա-
րէմիկ հայ գիւղի մէջ երեք հայ ընտանիքներ իրենց
զաւակներով մեռած են... Սովի աղէտներն հերիք չէին
կառավարութիւնն ալ սկսած է իր ճնշումներն ու հա-
լածանքներն օր աւուր վրայ բաղմապատկել:

Խնուսի Բերդ աւանի բնակիչներէն տ. Մ Կ Ր Ս ի չ

քահանայի տան մէջ գտնուող մուրացիկ տաճիկ մը, գի-
շեր ժամանակ զօրաց յիսնապետի մը սենեակը մտնելով
ուրթ ոսկի կը գողանայ: Երկու օր անցնելէ վերջ, տ.
Մ Կ Ր Ս ի չի եղբայր Մ օ ս օ ն տնէն կը վռնտէ տաճիկ մու-
րացիկը. վերջինս գրգռուած կերթայ յիսնապետին կը
խօսի թէ քու ուրթ ոսկիդ ես և տ. Մ Կ Ր Ս ի չի եղբայր
Մ օ ս օ ն գողցանք: Այս ամբաստանութեան վրայ, առանց
նայելու ճշմարտութեան, գիշերուան ժամը 3-ին այդ հայ
ընտանիքի տան մէջ կը փրթի մեծ աղմուկ և ժխոր. տ.
Մ Կ Ր Ս ի չ և իր եղբայրը ոստիկաններու միջոցով կը ձեր-
բակալուին եւ բանտ կը փոխադրուին: Յիսնապետը ա-
ռանց հարցաքննութեան կսկսի անլուր հայհոյութիւններ
թափել կրօնական, ընտանեկան եւ անձնական պատուոյ
դէմ: Այդ յայտնի անիրաւութեան չը կարողանալով տա-
նիլ յիշեալ քահանան ինքն եւս կը փոխարինէ հայհո-
յութիւնով: Ասոր վրայ յիսնապետը կը հրամայէ ոստի-
կաններուն, որ մի լաւ ծեծ քաշեն այդ համարձակա-
խօս քահանային: Ոստիկաններն ալ խարաղանքով այն-
քան կը կապուցնեն մարմինը, որ ուշաթափ կը մնայ.
տեսնելով ողորմելիին այդ վիճակը հարկաւորապէս կը հը-
րամայէ որ բաց թողուն: Քահանան կիսամեռ վիճակի
մէջ երբ տուն կը վերադառնայ, գիշերուան միջութեան
մէջ կը նշմարէ 12-ի չափ ոստիկաններ, որոնք իր տան
դուռը շրջապատած էին. կը հասկնայ մօտալուտ վտան-
գը եւ կսկսի մնացած ոյժով օգնութիւն ազադակել: Հա-
րիւրապէս լսելով դուրս կենէ և ոստիկաններուն կը
հրամայէ որ հեռանան այսպէս քահանան կազատի այդ
վերջի վտանգէն: Հետեւեալ օրը երբ իր ընտանիքով կը
դիմէ տեղւոյն գայմագամին բողոքելու, գայմագամն ա-
մենայն պաղարիւնութեամբ կը պատասխանէ «զարարը
եօգդ» (մնաս չունի):

Կառավարութիւնը կարինէն Մէհմետ անուն փոլիս
մը զրկած է ի խնուս, որ սկսած է ուրիշներու պակաս
թողածն ինք լրացնել, աջ ու ձախ ձերբակալելով յե-
ղափոխական զրպարտութեամբ շատ մը անհատներ: Այս-
պէս ձերբակալուած են Գաղքիկ գիւղացի Տիրացուեան
Արթին աղայի որդին Ա լ է ք ս ա ն եւ եղբոր որդին Մ ու
շ ե Ղ երիտասարդները, նոյն գիւղացի Ա ր է անուն ան-
ձը, Հապատին գիւղէն Բէյա Յ ա կ ո ք եւ Հ ա հ ն ա-
ղ ա ռ անուն անձերը: Վերջինս ոստիկանաց յիսնապե-
տին ձի մը ծախած է վեց ոսկիով, իսկ յիսնապետը
երեքը տալով միւս երեքը մի առնելու ըսած է, եթէ առ-
նես քեզ կը ձերբակալեմ, միթէ չեմ գիտեր թէ դու
ինչ յանցանք ունիս, ըսելով սպառնացած է երբ Հահ-
նաղարը բանի տեղ չը գնելու յիսնապետի սպառնալիքը
եւ իր պահանջն ետ չը կենար. քանի մը օր վերջ իբր
յանցաւոր (1) կը ձերբակալուի եւ բանտ կը ձգուի: Չեր-
բակալուած են նաեւ, Մարութի Վ ա տ ա ն ի Ա լ ա գ,
Խալիլ Հաւուցի Գ ա փ ա խ ե ն ց Ղ ա ղ ա ռ ի, Բերդ ա-
ւանցի Մ Ղ ս ի Գ է ո Ր գ ե ա ն Խ ա չ ա տ ու ռ ի, Հարէ-
միկցի Մ ու ռ ա տ ե ա ն Գ ա լ ի թ, Պ օ Ղ ո ս Պ ա տ-
ո լ Ե լ ի ն եւ Չէվիրմէցի Ա լ է ք ս ա ն, ասոնց յան-
ցանքը ինչ ըլլալը երբէք յայտնի չէ: Ասոնցմէ ոմանք
վերոյիշեալ փոլիսը առաջին անգամ գալու, 1894 յուն-
վար ամսոյ սկիզբները, ձերբակալելով քիչ ժամանակէն
թող տուաւ, իսկ մարտ ամսոյ սկիզբները կրկին անգամ
ձերբակալելով մինչեւ հիմա բանտը պահած է: Յայտ-

նի է թէ կառավարութիւնը դրամական խնդիր մը կուզէ կարգադրել ասոնց հետ, բայց խեղճերը չունին որ տան:

Չը նայելով ժողովրդի ուղղակի եւ անուղղակի բաշած տառապանքներուն կառավարութիւնն սկսած է ամենայն խստութեամբ հարկ հաւաքելը Ոստիկաններու խումբեր նոր տարուայ հարկի ցուցակները ձեռքերնին սկսած են գիւղէ գիւղ շրջիլ եւ առանց խնայելու սեռի եւ հասակի՝ անդժաքար ծեծ, հայհոյանք եւ անասելի չարչարանքներ տալ: Բէճէպ անուն հարկահաւաք պաշտօնեան, երբ Հարէմի գիւղը կը հասնի, անմիջապէս իր բարբարոսական շահատակութիւններուն ձեռք կը զարնէ: Ժողովուրդը ճարահատ կսկսի այս ու այն գիւղը փախչիլ իսկ Բէճէպ աղան կը յայտարարէ թէ «իրեն հրաման տրուած է կառավարութենէն, թէ որոնք որ փախչին առանց իրենց հարկերը վճարելու, զօրքերը իրենց ձիերով պիտի զբոսնին այնպիսիներու տները եւ անոնց կիներու հետ պիտի պառկին, եւ մինչեւ որ հարկը չը բերեն, անոնց տունէն պիտի չելնեն. եթէ չէք հաւատար կառավարութեան դիմեցէք կրտսէ...»

Մէկ ուրիշ հարկահաւաք Տալիշ Չափուշ ձրմեռ ժամանակ, երբ Եւլիի գիւղէն Բաղքի կը հասնի, կսկսի իր պաշտօնական արարողութեան, ազգի, կրօնքի, պատուոյ հայհոյութեան, միեւնոյն ժամանակ կսկսի պօռալ շայ մատնիչներ, եթէ դուք պատճառ չը լինէիք, մենք ի՞նչ դործ ունէինք այստեղ եւ ի՞նչ ու ձմեռուան ցուրտին այսչափ պիտի չարչարուէինք...»

Ի՞նչ էր ու չաբստահարութիւնն եւրը. — Պըլքըթի աշիրէթէն Մօստկօ անուն հոջակաւոր աւազակապետը Շապատին գիւղին շէն Սարգսի տան վրայ գիշերանց 17 հոգով յարձակելով տան մէջ գտնուած բոլոր ուտեստը իր ծառաներու շալակը տալով կը տանի: Յիշեալ Սարգիսը իր ընտանիքով միասին կը կապկպեն եւ այդ դրութեան մէջ կը մնան մինչեւ միւս օրը այս առաւօտ, մինչեւ որ դրացիներէն մէկը կը պատահի եւ կաղատէ:

Արկին սոյն աւազակապետը Աղձամելիք գիւղի մէջ խաթօեան Օհանի տան վրայ յարձակում կը դործէ, հայերը կը դիմադրեն եւ մեծ կռիւ կը բացուի. երկու կողմէն վիրաւորներ կ'իյնան, քրդերը սուրմալուի հրացանով գետին կը փռեն յիշեալ Օհանը. հայերը կառավարութեան կը դիմեն սակայն բողոքողները կը բանտարկուին: Սոյն Բաղքի գիւղին վրայ միշտ գիշերային յարձակումներ կը լինին եւ կը գողցուին ցորեն, յարգ, խոտ եւ...»

Պուրնազ գիւղի վրայ Շաւէշ աղա անուն քուրդը կը յարձակի ահագին բազմութեամբ: Գիւղացիները սարսափած կսկսին գիւղէն դուրս փախչել այնպէս որ քրդերը անարգել կը մտնեն գիւղը, դուռնուած բոլոր ուտելու բաները կը վերցնեն եւ գիւղը գտնուող ամբարն ալ բոլորովին պարպելով կը տանին: Այժմէն կարելի է հետեւցնել թէ ձմեռուան եղանակին, որ այս վերջիններն այսպիսի յարձակումներով եւ աւարառութեամբ կը կողոպտեն ժողովուրդը, ի՞նչ պիտի լինի արդեօք, երբ գարուն գայ...

Գ.Ա.Զ.Պ.Կ.

ԹՕՍԵՐԻ ԱՐԻՒՆԱՅԵՂ ԳԵՊԻՐԸ

Եւրոպիա, 30 Օգոստոս 1894.

Օգոստոս 4 էն 5 լուսնալու գիշերը քաղաքէս 3 ժամ հեռու Ամասիոյ ճամբուն վրայ Պաղտատէ Պօլիս գացող սուրհանդակը կը զարնուի: Կառավարութիւնը եղելութիւնը յեղափոխականաց կը վերագրէ. լեւները հեծեալ զօրքերով եւ ոստիկաններով կը լեցուի: Շրջակայքը եղած ամեն ջանքերէ ձեռնունայն քաղաքը կըսկսի անակնկալ եւ սուկալի խուզարկութիւն մը, թաղերը օրերով կը շրջապատուին եւ թիւրք խուժանին կառավարութեան կողմանէ պատուէր կը տրուի հսկել ամեն հայաբնակ տուններու վրայ եւ փախստականներ փնտռել:

Իբր հայ յեղափոխական, իբր դօմիթէի անդամ կը ձերբակալուին մօտ 250 անձինք. բանար անբաւական կըլլայ, մերձակայ պանդոկ մը կը վարձուի եւ անմիջապէս բարտարկեալներով կը լեցուի:

Բանտարկելոց վրայ դործադրուած պժգալի իրողութիւնները, եւրոպական հաստարկութեան աստջ աւօթահար եւ կորագլուխ կը պարզեմք: Օրերով անօթի թողելէ, ժամերով կախելէ, սոսկալի կերպով դանակածելէ վերջ՝ կը յանդգնին թրքական ամենածանր եւ ամենանողալի միջոց մը ձեռք առնել. բռնի խոստովանութիւն կորցնելու համար, կսկսին ոստիկանութեան հրաժանաւ լլկել խեղճ բանտարկեալները, որոնք չը կարողանալով տոկալ այսքան ծանր տանջանաց յակամայս կատորագրեն իրենց ներկայացեալ խոստովանադրերը:

Այլ քաղաքէս օգոստոս 20-ի երեկոյեան ժամը ըստ թրքականին 11-ի ատենները կառավարութիւնը դարձեալ կսկսի խուզարկութեան եւ խստիւ կը փնտռէ քանի մը անձեր, որոնք վախճալով փախստական դարձած էին եւ վատի մը միջոցաւ կ'իմանայ թէ այդ փախստականները Գաւա-Մահմէթ թաղը տուն մը կը գտնուին: Անմիջապէս Ափուլ չափուշ (որ սեղացի հայ ժողովրդի վրայ դործադրած անտանելի բռնութիւններով անուանի է) մօտակայ թաղերու թիւրք խուժանին յանուն կրօնի հրաւեր կը կարգայ փախստականները բռնելու՝ անմիջապէս տունը եւ ամբողջ թաղը կը շրջապատուի ոստիկաններով, զօրքերով եւ թիւրք յալալը պօղուգ՝ խուժանով:

Փախստականները կը յաջողին փախուստ տալ միայն Սարգիս Գալուստեան անուն անձը փախած ատեն տանիքէն վար կ'իյնայ եւ կը վնասուի: Այս եղելութեանէն վհատած եւ ապագային իր գլխուն գալիք տանջանքները դուշակելով դէնքի կը դիմէ, քաշելով իւր գարատաղ ըէփօլվէրը կարճակէ թշնամի խումբին վրայ: Ափուլ չափուշ կը վերաւորուի: Երկրորդ հարուածը բաւական կըլլայ իւր ուղեղը պայթեցնելու: Ափուլ չափուշ 3-4 օր վերջ առած վէրքէն կը մեռնի:

Եւ ահա այդ վայրկենին էր որ Եւրոպիա մի երբերգական տխուր ներկայացման հանդիսավայրն եղաւ: Թիւրք խուժանը կատաղած իւր անյաջողութիւններէ ոստիկանութեան հետ ձեռք ձեռքի տուած կսկսի ամբողջ թաղը աւարի տալ, տուններու գոնիք բռնի կը խորտակեն կը խուժեն ներս, կը բռնաբարեն, կանաչատ-

ուեն ընտանեկան սուրբ եւ նուիրական պատիւնս ընտանեաց պետեր եւ պաշտպաններ կենան դաշոյնի կամ ընկերակցի հարուածոց տակ. ոչ կանանց աղէխարչ պաշտանքն, ոչ կոյսերու անդիմադրելի անմեղ արտասուքը, ոչ մանկանց ահաբեկ գոռում գոչումը կը շարժէ այդ խաւարային արիւնարբու արարածոց զգացմանց թելերը. նոքա ամենանողկալի անառակութեամբ կը կապուեն ու կը կողոպտեն աջ ու ձախ:

Եւրոպայի ոստիկանութիւնը կը պայտաւորէ «կեանքի» ներքին իւր վրէժը լուծած է, կը հանդարտեցնէ խաժամուժ ամբոխը:

Հետեւեալ օրը գրեթէ ոչ ոք տունէն դուրս ելաւ, զի որքան որ կառավարութիւնն իր վրէժը լուծած էր, դեռ թիւրք խուժանը իւր դժոխային կրից չէր կարողացած յագուրդ տալ: Փողոցներու, հասարակաց պողոտաներու մէջ մարդիկ ծեծել, կանանց պատուը դէմ հայհոյել, կրօնի եւ ազգութեան դէմ վայրահաչել սովորական եղելութիւններ են: Կոյն իսկ թաղերու մէջ եւ պարտէզներու ճամբուն վրայ խուժանը կը յանդգնի կողոպտել հայ անցորդներն: Կառավարութիւնը աչք կը գոցէ եղելութեանց վրայ եւ դժոխային վայրագ քրքիչներ կարձակէ կեղծաւորութեան վարագուրին ետեւ:

Հաբաթ երեկոյան արիւնտեղ դէպքէն փնտրողներու թիւը մօտ 80 տուն կը հաշուուի:

Վեպքէն վախճալով մահամերձներու թիւը վերաւորեալներէ ու սպանուածներէ աւելի է:

Վաղարշի Ազգ. քաղ. վարչութիւնը Բ. Դուռը հեռագրել ուղեց, բայց Սեբաստիոյ վալի փաշան, որ արիւնայեղ դէպքի պատճառաւ քաղաքս կը գտնուի, արգելած է հեռագրել, առարկելով թէ «այս կարգի եղելութիւններ կարծուածին չափ արտասովոր բաներ չեն. նոյն իսկ Եւրոպայի ամեն կողմերը կը պատահի երկու երեք մարդու համար հարիւրաւոր անձինք ոչնչացնել»:

Զեմը գիտեր թէ այս խեղճ ժողովուրդը մինչեւ երբ պիտի հեծէ թրքական բարբարոսական անտանելի լուծին տակ ուր երբէք չիք ապահովութիւն կենաց եւ ընչից, ուր չիք միջոց յառաջդիմութեան:

ԹԱԵԱՆՈՒ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ

17 օգոստոս, 1894.

Վախորդ թղթակցութեամբս դրեցի Նիկիայի ծովեզերեայ քաղաքներու ու գիւղերու վրայ կառավարութեան ձեռք առած խստութիւններն ու հսկողութիւնները: Այս անգամ կը դամ գրել ձեզ մի քանի յայտնի դէպքեր, որի պատճառով կառավարութիւնը ենթարկեց Նիկիայի հայերն ամենածանր զրուծեան ու խիստ հսկողութեան. — մի ծանր կացութիւն, որմէ աղատելու համար, անխուսափելի պիտի լինի ժողովրդին արիւնհեղութիւնը:

— Այս տարուայ մայիս ամսու սկիզբները, բէյլանցի մի հայ ուսանող Մանուկ անուն, որ կը գտնուէր Տարսուսի հայ բողոքական պ. քննանեանի դռնէն մէջ արձակուրդի առթով կը դառնայ իր հայրենիքը: Այնքան անդրադարձ մօտ, Ս ա յ ասուած տեղը, պահապան ոստիկանները խուզարկելով այդ ուսանողը, իր քով կը դրա-

նեն մի քանի պատմական զրբեր, դասագրքեր եւ մի նամակի վրայ իւր թէ նկարուած է եղբոր հայկական զինանշանը:

Սուլթանի այդ հաւատարիմ ոստիկաններն, որ մի քանի դահեկան փրցնելու համար խուզարկէր էին, չի կարողանալով ստակ ձեռք ձգել, կը ձերբակալեն ուսանողը եւ թղթերով միասին փայտ կը տանին:

Փայտի դայմագամը խնդիրը կիմացնէ Ատանա, կուսակալը հեռագրով կարծեցեալ յեղափոխական ուսանողը՝ թղթով միասին Ատանա կուղէ: Զերբակալութեան երեք օր յետոյ 4 ոստիկաններու հսկողութեամբ ուսանողը կը տանին դէպի Ատանա:

Բայց Զոկ-Մարգուանէն 5 ժամ հեռաւորութեամբ Վարանլըգ-Վախուի կրճին վրայ, ոստիկանները մեծ դուռով կը հանդիպին երեք բռնորովին զինուած մարդերու: Ոստիկաններէն մին, առաջին տեսութեամբ, ձին կը դարձնէ ու կը փախի: Իսկ այդ մարդերը առանց մի բառ արտասանելու, բազէի նման կը յարձակին եւ կապարով ոստիկաններէ մին զանցնելով ձեռքէն դետին կը տապալեն: Իսկ միւս երկուսն մի-մի դանակով գետին կը փռեն եւ մարելու աստիճան կը ծեծեն: Այդ գործողութեան յետոյ, մարդիկները կը մօտենան ուսանողին արկին եւ բանալով մէջը ոչինչ չեն գտնել եւ կը շատանան ուսանողի բոլոր թղթերն առնելով հեռանալ: Յետոյ նոյն հիւսիս կանհետին: Փախող ոստիկանն, որ շնչասպառ մօտեկայ պահանջոց օգնութիւն կանչելու հասեր էր, մէկ ժամէն կը դառնայ, 5-6 ոստիկաններով. . . բայց իզուր. . .

Նոյն օրը ոստիկանները ետ կը դառնան փայտաւ տեղւոյն դայմագամը նոր խնդիրը կիմացնէ ճէպէլի միւլթէսարը Փութեան:

Ոստիկաններու եւ ուսանողի ջորեպանին ասելով կառավարութիւնը կը հաւատայ, որ մարդիկները Օճախուի եւ Զոկ-Մարգուանի հայ ասպատակներ են: Ճէպէլի միւլթէսարը, մալմիւտիւրին, փայտի դայմագամը, հազարապետ, հարիւրապետ, դամիսէր, 200-ի մօտ զօրք ու ոստիկաններ եւ 500 զինուած էրզենցի, չայցի եւ շրջակայ տաճիկ գիւղերու կատաղած խուժանով կառավարութեան հրահանգի համեմատ կը յարձակուին, յանկարծակի Օճախուի վրայ, — որի աղաքանկութեան կէսը թուրք է եւ կէսը հայ — կոտորել, կողոպտել հայերը:

Բայց կառավարութիւնը մի ժամուայ մէջ իր դէմ զինուած կը տեսնէ Զոկ-Մարգուանի բոլոր հայութիւնը ճգնաժամին դէմ՝ մաքառելու համար արիւթաւ կառավարութիւնը կը սարսափի, կը գուշակէ մի մեծ աղետալի արիւնահեղութեան սարսափելի հետեւանքը, կը քաշուի իր ձեռնարկէն, եւ հագիւ կը կարողանայ տաճիկ մուսուլման խուժանի կատաղութիւնը զսպել, չամաչելով խոստովանել, որ — հայերը մեզնէ զօրաւոր են. . .

Կառավարութիւնը կը շատանայ խուզարկել տունները մէկիկ-մէկիկ. փնտրել ասպատակները. . . բայց որոշ մէկի մը վրայ յանցանք չը կարողանալով բարդել, կը ձերբակալեն Օճախուի եւ Զոկ-Մարգուանի բոլոր աղաները, գիւղապետները եւ ամենքը կը թխեն մի դարձահոտ անոռի մէջ: Յետոյ կառավարութիւնը Օճախուի հայ տներէն կը ժողովէ ու կիւրացնէ երկու բեռ հին դէնք, — հրացան, ատրճանակ, վեց հարուած, սուր ամենքը մօտ

300 ոսկիի ապրանք եւ կը տանի:

Բայց սա խայտառակ կառավարութեան սիրուն կատակերգութիւնն է. . . մի կողմէն տաճիկ խուժանը կը զինէ, միւս կողմէն հայերու զենքերը կը ժողովէ. . . մեծ լացի, ահ ու դողի մէջ թողլով խեղճ հայ գիւղացիները. . . Բայց ո՞վ չի գուշակեր կառավարութեան միտքը. — կը ժողովէ հայերու զենքերը, միւս անգամ ընդդիմութիւն չը գտնելու համար ըմբոստ գիւղացիներէն, որպէս զի ինքը հեշտութեամբ կարողանայ կոտորել զանոնք:

Կառավարութիւնը մինչեւ երեք օր չի արձակեր հայ աղաները, եւ ատոնց վրայ կաւելացնէ երկու երիտասարդներ իւր գործի հեղինակը: Գոցա ձերբակալութենէ յետոյ կարձակէ կառավարութիւնը աղաներու կէտը: Ամսը պրկելով, եւ պինդ քէլէփէններով այդ երիտասարդները հայ ուսանողի հետ կը տանին Ատանա: Մէկ հատը շատ յաղթամարմին լինելուն՝ ձեռքերը սաստիկ կը վերաւորուին: Այդ երիտասարդները մինչեւ այսօր կը հեծեն Ատանայի բանտի խորշերը ծանր տանջանքներու ներքեւ, որ խոստովանին իրենց ընկերները. . . Բայց կառավարութիւնը մինչեւ այսօր չի հասաւ իր փափաքին: Աղաներէն, ձերբակալուածներու չորսն ալ դեռ բանտի խորշերն են: Կառավարութեան ցանկութիւնն այժմ պարզապէս դոցա հետ դրամի սակարկութիւն է, ոչ թէ խնդիրը արդարօրէն քննել: Բայց անցած է ահա երկար ժամանակ, որ բանտարկուած երիտասարդներու մասին ոչ մի լուր չի կայ: Թողովուրդը դոցա գոյութեան մասին մեծ կասկածանքի մէջ է: — Այս դէպքէն 3 օր յետոյ Օսմանի յ է ի աւաղակաբարոյ թուրքերն ալ կը յարձակին հայց եկեղեցիին վրայ, կը կողոպտեն ու կը լլկեն, — կաղըստեն ու կը միզեն շէյխ Ալեքեանի առեօնելոյթս պաշտպանած եկեղեցին. . .

Այս դէպքէն ի վեր, ահա 3 ամիս է, Չոկ-Մարզուանի հայերը քուն չեն կարող քնել գիշերները, մի յանկարծակի յարձակումի երկիւղէն, որ միշտ սպասելի է տաճիկներու կողմէն, ստիպուած է հայ գիւղացին, սիրականի տեղ իր զենքը գրկել ու պառկել: Այդ օրերէն ի վեր տաճիկներու եւ հայերու յարաբերութիւնները խիստ լարուած են. մինչեւ իսկ իրար ուղիղ նայելու համարձակութիւնը վերցած է: Իսկ կառավարութեան հսկողութիւնը բաղմամբատկուած է. չիկայ մի ճամբորդ, որ չի խուզարկուի, չիկայ մի ջորեպան, որ չի խուզարկուի: Սայի բարեյաջող պահականոցի մօտ ալ այժմ կառավարութիւնը հաստատեց մի քառասունորդարանի (քարանթինս-յի) գիծ, այնտեղ ուր գօլերա չի կայ. . .

Ահա Սեւ-Լեւոյի վիճակն ալ, որ մօտա փոր-չայքի եւ Հայաստանի քարանթինային մէջ:

Այդ դէպքերու ժամանակ՝ Ալեքսանդրէտի մէջ խուզարկուեցան շատ հայերու տներ, յեղափոխականներ ու յեղափոխական գրքեր գտնելու նպատակաւ: Խուզարկեցին նաեւ թրքական աժանսի տնօրէն Օհաննէս էֆ. ճիւղերձեանի եւ նախկին ուսուցիչ պ. Գրիգոր Մինասեանի տները, բայց ոչինչ չը գտան:

Այս դէպքերու ժամանակ Հալէպի մէջ եւս պատահեցան խուզարկութեան եւ ձերբակալութեան դէպքեր: Հալէպի քահանաներու մէկի եւ Չայնաւորեան անուն հայ լրտեսի մատնութեամբ իւր յեղափոխական ձերբակալեցին եւրոպական դերձակ 3 ա-

ր ու թիւն Գրիգորեանը, լուսանկարիչ Գ. Մըսըրլեանը եւ մէկ ուրիշը ամբաստանելով թէ՛ «Հնչակ» կը կարգանայ եւ յարաբերութեան մէջ են «Հընչակի» Կեդրոնին հետ: Մէկ ամիս բանտարկութենէ յետոյ 20 ոսկի կը տան եւ կարձակուին Մարտանը եւ միւս հայը: Իսկ պ. Գրիգորեանը կը մնայ դեռ բանտը: Այս երրորդ անգամն է, որ կառավարութիւնը կը բանտարկէ երկար ամիսներով Գրիգորեանները, իւր յեղափոխական: Գրիգորեանները, որ իրենց տաղանգով մի փայլուն դիօր կը գրաւեն իրենց արհեստի մէջ, կառավարութիւնը փրձացուց զանոնք անտեղի կասկածներով, երկու եղբոր 400 ոսկիի մի վնաս հասցնելով:

Այս օրեր երկրորդ անգամ է, որ խուզարկեցին Բէյլանի հայոց եկեղեցին եւ դարձեալ ոչինչ չը գտան: Բէյլանի թուրք եւ հայ ժողովուրդի դուռնին ալ լարուած է: Ճանապարհները ամեն կողմ խոտացած են, մարդիկ զայրոյթ կզգան մինչեւ իսկ առեւտուրի համար ճանապարհորդել այդ խիստ հսկողութիւններու պատճառով. . .

Եւ այդ զայրոյթէն է, որ անշուշտ պիտի պատճառուի եւ Կիլիկիայի սպստամբութեան որոտը. . .

SORH8T

— 0 —

25 օգոստոս 94.

Կիլիկիայի վիճակը ծանրացաւ, կառավարութեան եւ տաճիկ խուժանի խժդուութիւնները, խուզարկութիւններն ու ձերբակալութիւնները օր օրի անպատմելի համեմատութեամբ կաճին: Սարսափն ու կասկածը իրականութիւն դարձան: Բէյլանի, Ալեքսանդրէտի, Փայասի եւ Հայ-Լերան յարաբերութիւններն իսպառ խզուած են եւ գործառնութիւնները դադարած: Այսքան տարածութեան մէջ, որ վաստակի տարեջրջանը նոր կը բացուէր, իր սովորական ուրախութիւնը կորուսեր է. վաստակի փոխարէն, կորուստն է որ կը տիրէ հայ պարկեշտ գիւղացիին ու համեստ քաղաքացիին մէջ, սովորական ուրախութեան տեղ լացն ու կոծը. . . ամեն ոք փակուած է իր տանը մէջ. . . Սարսափը՝ սեւեր հագած, Բէյլանի եւ Չոք-Մարզուանի կողմերը կը թափառի. . .

Գարանը Գափուի դէպքը, որ դեռ անցեալ օր գրեցի, աղետալի հետեւանքներ ունեցաւ: Կառավարութիւնը, որ պատեհ առիթ կը փնտռէր քանդելու, ցրուելու Հայ Լերան բազմահայ գիւղերը, ձեռքին մէջ մի մեծ պատրուակ ունեցաւ, ինչպէս Ատանայի աւաղակ պաշտօնեաները կողոպուտի համար, որ 90 թուականին հաճեցին կողոպտելն ի վեր բերանին բաց էր մնացած. . . Եւ ահա՛ առիթը ներկայացաւ, որ իրենց չի վճարուած ամսականները գանձեն խեղճ հայ գիւղացիի սնանկացած քսակէն. . .

Անցեալ օր գրեցի թէ, Չոք-Մարզուանի հայ աղաներէն մի քանիսը դեռ Ատանայի բանտն են. . . Այսօր փոխանակ անոնք արձակելու, աւելի ըստուարացուցեր են ատոնց թիւը: Մօտ 60 հայ աղաներ, արհեստաւորներ, կղերականներ ու ուսուցիչներ ձերբակալուած են Չոք-Մարզուանի, Օճախլըի եւ Իօզէրլիի մէջէն: Քառասուն օր է Ալեքսանդրէտի առեւտրական յարաբերութիւնները խզուած են այդ գիւղերու հետ,

նչ մի վաճառական, ոչ մի ճանապարհորդ չեն թողնում որ անցնի փայտի կողմերը: Առավարութիւնը իր յանցանքը ծածկելու համար քօլէրա կայ կը պատասխանէ եւ դորա համար հաստատած է քառասնորդարանը, որ սակայն պայմանաժամ չունի քառասնորդարանը վերջացնելու եւ անցնելու:

Այդ բանտարկեալներէն շատերը տարուած են Ատանա, ուր ենթարկուած են միջին դարերու տանջանքներու՝ եւ այդ ամենը խոստովանեցնելու համար: Իսկ գիւղերու մէջ մի խիստ հաստաքնութիւն է, որ կը կատարուի այդտեղ եղած խժգոթութիւնները քառասնորդարանով է փակուած. աւելի համարձակ գործադրելու համար: Վերջին օրերս մեծ շշուկ ու հաւանականութիւն կայ, որ պատահած են այդ տեղեր մեծ արիւնահեղ կռիւներ ու ընդդիմութիւններ, բայց ստուգութիւնը կը պակասի, ամենքը քառասնորդարանի մէջն են. . . կոտորածները քողերային են. . .

Ամեն բան մութին մէջն է, ուր պիտի կորի եւ ինքը թուրք բռնակալը:

Ալէքսանդրէտը պարբերական խուզարկութիւններէ յետոյ դերձ չիմաց ձերբակալութիւններէ, որովհետեւ ուսանող Մանուկի բռնուած նամակը իբր թէ Ալէքսանդրէտի մի քանի ուսանողներն են գրած:

Բայց Ատանայի աւագակ պաշտօնեաները հասկանալով որ Հայ-Վեհեցիները այնչափ հարուստ չեն ինքզինքնին կշտացնելու համար, խորամանկութեամբ ձեռք ձգեցին Ալէքսանդրէտի հայերը:

Ալէքսանդրէտ հաստատուած երեք մասնիչ եւ չարագործ փաստաբաններ կան, որոնք իրենց ամբողջ կեանքին մէջ ի վնաս ազգին եւ ի հաշիւ կառավարութեան են գործած, կառավարութիւնը իբր յեղափոխական կը կանչէ Ատանա: Շղթայակալ կը տանին այդ երեքն Ատանա, որոնց անուններն են. Հայրապետ Էֆէնտի Պալեան, Նազարէթ Էֆէնտի Տէպէճեան (սա չորս տարի առաջ ամբողջ Հաճինը խառնեց տակնուվայ եւ հազիւ փախաւ Հաճնցիներու կատաղութենէն Ալէքսանդրէտ) եւ ճըրճի արուբաթ Շէրպէթճի: Սոցա Ատանա գնալէն ութ օր յետոյ ձերբակալեցին Ալէքսանդրէտի մէջ, Վիւպէնկեաններու գործակատար Վեսարացի Քերովը Է Էֆէնտի Քէշիշեան պատուաւոր յանձնակատարը (գօմիսիօներ): Ատանայի պաշտօնեաները սխալ չէին հաշուեր տանելով երեք փաստաբանները, նոքա քաջ գիտէին թէ նոցա ձեռքով միայն կարող էին ընտրել Ալէքսանդրէտի իւղոտ որսերը: Շղթայեցին Քէշիշեանն եւ մի խումբ զօրքերով տարին Ատանա: Գորա գնալէն երկու օր յետոյ ձերբակալեցին վաճառականի գործակատար Հեթում Շամլեան անուն 17 տարեկան պատանին եւ զայն 4 օր բանտը անլուր տանջանքների տակ պահէլէ յետոյ՝ ձերբակալեցին սորա հօրեղբոր որդի Արշաւիր Շամլեանը 19 տարեկան: Երկու օր վերջ 5 ոստիկան մեկնեցան Ալէքսանդրէտէն, երեքը գէպի Պաղ-Աղբիւր ամառանոց եւ երկուսը Բէյլան, ուր երկուշաբթի օր ժամը 12-ին ձերբակալեցին Վահրամ ճապաեան անուն 20 տարեկան երիտասարդ պանդոկապետը, որի ոտքերն ու ձեռքերը շղթայելով իջուցին նաւահան-

գիստ: Նոյն օրը Պաղ-Աղբիւրի մէջ ձերբակալեցին Հաճի Պօղոս աղա Շամլեանը (Արշաւիրի հայրը), Ալէքսանդրէտի ամենէն իւղոտ հայը: Գորա հետ ձերբակալեցին պատուաւոր կօշկակար հաճի Եղիա Պէտէվեանը: Այս երկուսը բերին նաւահանգիստ եւ դրին բանտը, քաղաքը չի յուզելու համար: Յաջորդ օրը օսմանեան շոգենաւի մէջ շղթայած ամենքի ձեռներն ու ոտներն — բացի հաճի Պօղոս աղան, որ Ամերիկեան հպատակ է — Ատանայի բանտի ուխտաւորները լինելու բախտը պիտի ունենային: Առաւօտուն շոգենաւ գնալէ առաջ ամենքն ալ հանեցին բանտէն, ամենքն ալ շղթայուած, տասներկու ոստիկաններու մէջ տեղէն առաջնորդեցին դէպի ծով, իրենց ընտանիքի անդամներէն եւ բարեկամներէն ոչ մէկին չի թողուցին մօտենալ եւ գոնէ վերջին մի խօսք ասել, կարծես կը տանէին թաղել զանոնք մէկ անգարձ աշխարհի մէջ. եւ ինչ յանցանքով. . . հայ անուան համար եւ գեռ ուտելու հաց ունենալուն համար. . . Այդ տեսարանի առաջ շատ ազէկտուր էր սիրականներու ողբը:

Բէյլան ոչ նուազ սարսափի մէջ է: Այնտեղ ձերբակալեցին ականաւոր մարդերէն ու երիտասարդներէն 14 հոգի, ձերբակալել տուողն է Մարաշցի Վիրակոս անուն մի խենթ վարդապետ, որ իր բերնով ուխտած է հայութիւնը բնաջինջ անել: Մի վարդապետ, որ սուլթանին գրեր է, թէ ցանկութիւն ունի տեսնել իր արփիա շող գէմբը, որովհետեւ հայկական խնդրի համար կարեւոր բաներ ունի իմացընելու, եւ սուլթանը հրամայած է Ալէքսանդրէտի տեղակալին՝ լսել վարդապետի խնդիրը: Բէյլանցիներու յանցանքն այն է եղած, որ 4-5 տարի առաջ մի խումբ հայեր հանգանակութիւն են բացեր իրենց մէջ զբաւրոցի համար եւ այդ թղթերն եկեղեցիի խուզարկութեան ժամանակ գտնուած լինելով կառավարութիւնը կուզէ հաւատացնել թէ դպրոցական քօղի տակ յեղափոխական ընկերութիւն լինի:

Բէյլանի ժողովուրդը սաստիկ յուզուած ու կատաղած է: Հինգ ոստիկան որ նաւահանգիստէն Բէյլան կը բարձրանան ձերբակալեալները նաւահանգիստ իջեցնելու, ճանապարհին իրենց առաջ կը գտնեն չորս զինուած մարդիկներ՝ որոց մին, երեւի վերջին վճճ-խնդրութեամբ՝ այնպէս մի լախտ կիջեցնէ ոստիկանի մէկի զլխին որ տեղնուտեղը գետին կը փռուի ու. . . կը մեռնի: Մնացած ոստիկանները ահ ու դողի մէջ հազիւ կը կարողանան փախչիլ: Կատաղած է հայ ժողովուրդը, ճգնաժամի կռիւն է. անգէն հայը վերջին զայրոյթով օրհասական կեանքի առաջ լախտ է, որ կը վերցնէ բռնութեան դէմ. . . զինուածները կանհետին: Գորա նութեան դէմ. . . զինուածները կանհետին: Գորա վրայ բանտարկեալները իսկոյն նաւահանգիստ կիջեցընեն: Բէյլանի տաճիկ ժողովուրդը կատաղած է. տին ուղուրունա (կրօնքի համար) վերջին կոտորած պիտի անեն, մինչեւ իսկ փոքրիկ լակոտներ կը պոռան հայերուն, յիշա կեաւուրլար սիզի քեսէճէյիլ¹ (գէշ կեաւուրներ, ձեզ պիտի կոտորենք):

Ամուգ օվայի դաշտին մէջ, թիւրք գիւղացիները կը բռնեն խողի որսի գնացող մի հայ եւ կըսկսին սաստիկ ծեծել ասելով, յահա, մեր ձեռքն ալ

անցաւ մի կեալուր, մենք էլ այս սպանենք,“ խեղճ հա-
յը իր քով գտնված մի քանի դահիկանը կը տայ եւ
հազիւ կը կարողանայ աղատիլ մոլեռանդ տաճիկ խու-
ժանի կատաղութենէն:

Ալ տեղ չի մնաց որ հայը «Փէսատ» չի համարուի,
քիչ ատենէն Կլիկիան թատր պիտի լինի արիւնհեղ
կոտորածի . . այս օրուանը նորա նախերգանքն է:

Բռնակալը մեր արիւնով պիտի մարեցնէ սրտի կը-
րակը եւ այդ արիւնով ալ պէտք է խեղճուի եւ ինքը .
անզէն ժողովուրդը, այս խժոժութեան առաջ լախտով
պիտի դիմագրէ, ի հարկէ այն հայը, որ իր մէջ գեռ ինք-
նամատահութեան եւ պատուախնդրութեան ոգին կը կրէ:

ՏՕՐՈՍՅԻ

1894 ՍԵՊՏԵՄԲԵՐ 8.

Գա սեւ թիւ մէ որ կը յիշեցնէ մեզ անցեա-
լը, եւ այդ ահաւի եւ սոսկում ազգող տեսարանէն
ճիշտ տարի մը է անցած, այն րոպէն երբ 8 զին-
եալներ մահուան բրաինքների մէջ թաւալած կը կուռե-
ին 800 զինեալ անձերու հետ. հրացանի գնդակներ
կը վժվժաին եւ կարճակուէին երկու կողմէ, մինչ մերթ
ընդ մերթ կը լսուէր թուրքերէն լեզուաւ. «մեր գիակը
կանցնի ձեր ձեռք»:

Այն զարհուրելի ժամը յորում նահատակուած կը
տեսնէինք մեր անմոռանալի ընկերներ եւ անմահ հերոս-
ները Բ ար ս ե ղ Զ ա ք ար ե ա ն ց, Մ խ ի թ ա ր
Տ է ր - Ն շ ա ն ե ա ն եւ Մ ի հ ր ա ն Զ է ն կ ի ւ ճ ե ա -
նը կուռի եւ արեան հրապարակի վրայ:

Այդ մեծ օրը, յորում երկինք իր երեսը ծածկեց
սեւ քողով, կարծես կուլար, կողբար եւ սեւ հողը իր
մէջ ամփոփեց այդ նահատակուած անձերը:

Սեպ. 8 . . այդ սեւ ու զարհուրելի թիւը սակայն
անշնչելի եւ խորապէս գամուեցաւ ժողովրդի սրտին
մէջ եւ նոյն ատեն հայկական յեղափոխութեան պատ-
մութեան էջերուն մէջ:

Հոն 8 հոգի կը կուռէին 800 ի հետ, բայց երկու
անհաւասար կուռող խումբերի նպատակների մէջ ինչ
անհուն հեռաւորութիւն կար եւ ինչ մեծ անդունդ
նոցա միջեւ. մէկը կը կուռէր հարկւրներով յարձակ-
ուելով սպանելու եւ կամ ձերբակալելու ֆէսատները,
ոճրագործները կամ չարագործները, լոկ այս սահմա-
նաւոր նպատակի համար. իսկ միւսն, չը նայած իրեն
չըջապատող բազմաթիւ բաշը բօղուդ թշնամիներին, հե-
րոսաբար եւ անձնուիրաբար կը կուռէր տառապող ու
հարստահարուած հայ ժողովրդի ազատութեանը, նորա
բարեխառութեանը համար եւ յետոյ նահատակ կընկ-
նէին երեք հերոսներ զէն ի ձեռին կրկին հայ հասա-
րակութեան, հայրենեքի ազատութեան համար: Առաջ
մահ՝ յետոյ կեանք. առաջ ընկճում՝ յետոյ յաղթու-
թիւն, նախապէս չարչարանք՝ յետոյ հանգստութիւն:

Հանգիստ ձեզ, ո՞ անմահ ընկերք. դուք ձեր նա-
հատակութեամբ լրացրիք ձեր պարտքն անթերի եւ
դորանով անմահացրիք ձեր անուններ որ պիտի յիշվին
չարունակ: Բռնակալութիւնը ժպտեցաւ, ծիծաղեցաւ, ու-
րովհետեւ սպանեց ձեզ նման անձնուէրներ, հերոսներ.

մենք ալ կը ծաղոենք նորա ծիծաղը. դորանով նա
ստացաւ մի խոր վերք եւս արդէն ընդունած խոր
վերքերու մէջտեղ:

Գուք նախապէս յափշտակեցիք նահատակութեան
պսակը եւ երկրորդողներ հասան ձեր ետեւէն: Գուք
որ գործեցիք, կուռեցաք, նահատակուեցաք այն հասա-
րակութեան մէջ, որն թէպէտ նախապէս ապերախտ
գտնվեցաւ եւ չի գիացաւ ձեզ պէս արիւն թափողնե-
րի արժանիքը, բայց յետոյ լացաւ դառնապէս եւ ողբաց:

Իցիւ թէ ամեն հայ ձեզ պէս ճանչնար իւր պար-
տականութիւնը, գործէր ձեզ պէս, կուռէր ձեզ պէս
եւ նահատակուելու սիրտ ու արիւն թիւն ունենար: Մե-
ռաք թէեւ, բայց կենդանի էք յաւիտեան:

Հետեւեալ Յայտարարութենէն բազմաթիւ օրինակ-
ներ ցրուեցան Մանգուանի մէջ.

«1893 ՍԵՊՏԵՄԲԵՐ 8

«ԱՐԻՒՆԱՀԱՆՎ ԿՈՒՒՄԱՆԻ ՄԱՐԶՈՒԱՆԻ ՄԷՋ:

ՏԱՐԵԴԱՐԶ ԱՌԱՋԻՆ:

ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐ ԼԵՒՈՆ ԲԱՐՍԵՂԵԱՆՑ

ՄԻԹԱՐ Տ. ՆԻՇԱՆԵԱՆ ԵՒ ՄԻՀՐԱՆ ԶԷՆԿԻԻՃԵԱՆ:

Անձնուէր զինուորներ ժողովրդային ս. Դատի, որ
նահատակուեցան Հնչակեան յեղ. դրօշի տակ, արիա-
բար կուռելով բռնակալութեան դէմ—

ԶԵՐ ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Ազնիւ ու պաշտելի ընկերներ, դուք զօհեցիք ձեր
թանկագին կեանքը տառապած ու հարստահարուած
ժողովրդի ազատութեան եւ բարօրութեանը համար:
Գուք լրացրիք դորանով ճշմարիտ հայու եւ համոզ-
ուած յեղափոխականի պարտքը անթերի: ՀԱՆԳԻՍՏ
ԶԵՐ ՈՍԿԵՐԱՑ: Կերդուինք ձեր սուրբ յիշատակով
եւ ձեր սուրբ գերեզմաններու վրայ՝ հարուածել միշտ և
անխնայ թշնամի բռնակալութեանը եւ նորա վատ ար-
բանեակները:

ԿԵՑՑԷ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ:

ԿԵՑՑԷ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ:

Այդ հերոսները կանգուն են մեր գիմաց իրենց ան
մահութեան մէջ:

Ամասիա.

ՏԱՊԱՐ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Տ Ա Ր Օ Ն Յ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿ—(ՑԱՆՔԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ, ԿԻ-
ՏՈՒՈՒՒ ԿՐԿԻՆ ՎՆԱՍԸ, ՀԱՅԻ ՍՂՈՒԹԻՒՆԸ, ՀԱՐԿԱ-
ՀԱՆԱՔԻԶՆԵՐՈՒ ԶՆՇՈՒՄԸ). — ԲԻՐԴ ԸՇԻՐԷԹ-
ՆԵՐՈՒ ԱՆՎԵՐՋ ԿՈՒՒՆԸ ԵՒ ՇԷՑԻՐՈՒ ՋԱՆ-
ԲԸ.— ՄԻ ԲԱՆԻ ԸՄԲՈՍՏ ԳԵՂԵՐ:

Սասուն, 25 յուլիս 1894.

—Անցեալ յօգուածովս ցոյց տուի հայու արդի կա-
ցութիւնը, որ հետզհետեւ վատթարանալու վրայ է: Հա-
յու անտեսական վիճակը այնքան ինկած է, որ նորա
կեանքի բնական պէտքերը կենդանւոյ կեանքէն ալ շատ
ստոր աստիճանի մէջ կը գտնուին: Կարգին ոչ հագուստ,
ոչ ուտելիք, ոչ անկողին եւ ոչ ալ բնակարան ունի:
Եթէ մէկը, թէ լինի աշխատանքով, թէ լինի մուրալով
յաջողի կտոր մը կը կը կամ կորեկի սեւ հաց ձարել,

բաղդասուր է: Խիստ մեծ մասի հաղուստը ցնցոտիներէ կը բաղկանայ, որոյ մէկ թելը եթէ քաշուի քառասուն կարկատան մէկէն կը թափին: Ուտելիքն է կամ խոտեղէն, կամ թան ու թանհատ եւ կամ պատառ մը սեւ հաց: Անկողինը կը բաղկանայ կ ա կ ու ղ քարէ բարձէ մը, փափուկ խոտէ կամ անշարժ հողէ մահիճէ մը եւ մի քանի (չուլէ) վերմակէ մը. իսկ բնակարանին՝ գետնախորշ ախոռէ, մարագէ եւ գոմէ մը կը բաղկանայ:

Չմրան նեղութենէ ու անթութենէն մազապուր պըրծնողներն բաւական յուսախաբուեցան թէ կառավարութիւնը սերմ պիտի տայ ցանելու եւ արտերնին մշակելու: Այգիպիտի ի զուր յոյսով պահ մը կը միտթարուէին ապագային կուշտ հաց ուտելու երազով. բայց, բացի վաշխառու շահախնդիրներէն՝ ոչ հայրախնամ՝ կառավարութիւնը եւ ոչ ալ հայրենասէր մեծատունները աշխատեցան երկրին նիւթական անկեալ վիճակը բարձրացնելու համար՝ օգնել հողագործին: Ինչ որ ըրին աչքակապու թիւն էր: Այսօր Մշտ դաշտին մէջ հազիւ հինգ արտէն մէկը միայն ցանուած է. իսկ մնացածները կը մնան անմշակ:

Մշտ դաշտի ցանուած արտերուն մի մասը, Յ ր ու ն ա ց, Ա լ ի ճ ա ն ի, Ք ր դ ա գ ո մ ի, Օ ր կ ն ո ց ի, Յ ու ն ա ն ի եւ Գ ո մ ս ի արտերը, անցեալ ամրան պէս կիտուող վերստին փճացուց:

Ներքին դաշտի հացը եւ այս կողմերի թ ա խ տ ա մ ա ն ելնելէն ի վեր, հացի գինը բաւական էժանցած է. բայց տակաւին շատ հեռու է իւր սովորական գինը իջնալու: Այժմ՝ ցորենի կօտը կը ծախուի 15-17, որ առաջ 25-30-ի կը ծախուէր: Կլի, կորեկ եւ գարին ալ նոյն համեմատութեամբ էժանցած են, սակայն ինչ օգուտ որ աղքատ ժողովրդեան մօտ փարա չը կայ, որ փորը կուշտ ուտելու հաց կարողանայ գնել:

Չը նայելով այս անտանեցի վիճակին՝ միւս կողմանէ կառավարութեան հարկահաւաքիչ պաշտօնեաները սարսափելի խոտութեամբ կը քամեն ժողովրդի արեան վերջին կաթիլը, տուրքը գանձելու համար: Կը ծախեն տան մէջի ամենաչնչին արժէքաւոր գոյքերն անգամ, չուլ, թաղիք, հագուստ եւ այլ բաներ: Ինչպէս Յրունաց ու Աււարի ճի մէջ. նոյնպէս միւս բոլոր գեղջւոց պանդուխտ հայերու կնկտիք մի տեղ ժողովելով երեսները մուր կը քսեն, կը ծեծեն, կանպատուեն տուրք գանձելու համար: Երբ կանայք կաղաչեն որ չունինք, պաշտօնեայք լրբաբար կըսեն «գացէք բողբոթիւն ըրէք եւ տուրքը տուէք». կանանց վրայի լաթերն անգամ հանելով կը ծախեն տուրքի տեղ:

Թահսիլտար ֆարիզ, Հաւատարիկ գեղացիները շատ մը ծեծելէ եւ նեղելէ վերջ՝ կըսեն «ախ, փրօթներ, ձեզմէ երկու հարիւր մարդ մորթեմ եւ ձեր արիւնը խմեմ, նոր սիրտս կը հանգստի. դուք ինկիւղի մարդիկ էք, և այլն»:

Աշակերտի, Մանգկերտի, Պուլանըխայ, Խնուսի եւ Վարդովայ մէջ գտնուած՝ Հասնանցիք, Ճիպրանցիք, Չըրըքիք, Պըրըքիք քիւրտ աշիրէթներն (համիտիէ) միմեանց դէմ կը կռուին աստիճանի մեծութեան, փառասիրութեան համար. իսկ այս կողմի՝ Սասունցիք, Բագրանցիք, Խիյանցիք, Պէլէքցիք եւ Պօղըքցիք կը կռուին շահասիրական գիտաւարութեամբ: Ասոնք թիւրք կառա-

վարութեան շլացուցիչ աստիճաններէն խաբուող եւ համիտիէ գրուողներէն չեն, այլ իրենց շահուն եւ օգտին կը նային, երբեմն հայուն բարեկամ կը ձեւանան եւ երբեմն տաճկին, տեսնելով թէ դէպքերը ինչպէս կը բերեն:

Սասունցի Պըշարի Խալիլը, որ որեւիցէ դուժարի համար հազար անգամներ թէ հայոց եւ թէ թըրքաց հետ ուխտ ըրած է բարեկամ լինելու, իր մարդիկը կը դռնէ Պօղըքցիներու քերվանի առաջ հինգ ջորի իրենց բռնելով խլել կուտայ. վերջիններն ալ անոր պատկանեալ Հարկուրաց գեղէն քսանը մէկ ոչխար կը թախեն:

Յունիս 3-ին պըտըցի քրդերը միմեանց հետ կը կռուին: Շէկօ տունը միւս մնացած պըտըցուն հետ կըռուելով՝ առաջինէն մէկ երկրորդէն երկու մարդ սպանուած են. երկուստեք երեք հոգի ալ վիրաւորուած են:

Հասնանցիք իրարու հետ զարնուելով՝ երկուստեք 12 մարդ կսպանեն:

Թիւրք կառավարութիւնը տեսնելով որ ցեղային ատելութիւն ունեցող աշիրէթներով կարելի չը լինի որ եւ իցէ մեքենայութիւն գլուխ հանել հայոց դէմ, մօլաններ եւ շէյխեր կը հանէ անոնց մէջ, զանոնք հաշտեցնելու, որք բաւական յաջողութեամբ գլուխ կը տանին իրենց եղած յանձնարարութիւնը: Զէյլանու շէյխ Խուհամէտը եւ Կտորնու Մօլլան, բաւական մեծ դեր կը խաղան աշիրէթներու մէջ:

— Յունիս 13-ին թիւրք կառավարութիւնը, մի նոր քաղաքականութեամբ ուղեւոր մի քանի հայ գեղերը պատժել. անոնց խամշուրները ետ վերադարձուց, ըսելով, դուք ապստամբներ եւ յեղափոխականներ կը պահէք: Եւ հետեւեալ օրը նոյն գեղերու Փասուր գաղաի գայմագամը 30-35 հեծեալ ոստիկաններով ու աղդեցիկ քիւրտ աղաներով դնաց յիշեալ գեղերը՝ իւր չար դիտաւորութիւնը ի գործ դնելու: Այդ գեղերու ամենաշանդուգնը ներկայացաւ Իշխան ձոր գեղը, որ տեսնելով թէ ինքնակոչ հիւրերը մարդիկներ (գլխաւորները) կը ձերբակալեն եւ աւերումներ կը գործեն, փառաւոր կերպով զինու զօրութեամբ վառեց յիշեալ քանդիչ պաշտօնեաները եւ խնց ձերբակալեալները յունիս 25-ին: Գայմագամի հետ եկած էին խիյանցի Հիւսէյիսի աղան (Քէօր Սլօի հայր) եւ եիւզպաշի Եօմէր աղան եւ այլ ոստիկաններ ու զուլաֆներ: Գայմագամի փախչելէն ետք, այլ եւս չեն ուղեր Հեղին ու Ընկուզն ահալ եւ Արտկուանայ տուրքերը, համարելով ըմբոստ գեղեր, որք դէպքէն իսկոյն եւեթ քաշուեցան քեփիին անառիկ սարը, որ ժամանակ մը աւազակ քրդաց Ղօզանն էր: Այդ դէպքը ահ եւ զարմանք ազդեց քրդաց վրայ:

(Կը շարունակվէ.)

ՍԱԼ:

Հ Ե Ր Ք Ո Ւ Մ.

Մարտի 12-ին «Արմենիա» անուն լրագիրը, իր սեպտեմբեր 8, թիւ 12 համարում օգուտ է քաղում Լօնդօնի «l'Arménie» թերթում լոյս տեսած մէկ ինչ-որ խառնաշփոթ տեղեկութիւնից և իր կողմից՝ ասիական

Թափանցիկ սատանայութեամբ եւ զարմանալի կամայական կերպով՝ աւելացնելով «Հնչակեան շահատակութիւն» վերնագիրը, մեր կուսակցութեանն է վերագրում Արսէն վ. Թոփմանեանի, Զակոբ սարկաւազի, ինչ-որ Ծոնոսի եւ այլն սպանութիւնները: Ո՛չ թէ պատասխանելու համար այդ լրագիր կոչված փալատին, այլ յանուն ճշմարտութեան եւ նկատելով այդ անամօթ ամբաստանութեան ծանրութիւնը, մենք սրանով յայտնում ենք, որ վերոյիշած անձերից ո՛չ մէկն էլ Հնչակեան կուսակցութեան դատաւարութեանն են թաղալ չէ եղիլ: Այդ սպանութիւնները, ըստ որում կիսամեռ վերաւոր Թոփմանեանին այրելը, մի ուսումնասիր (որի անունն այստեղ տալ հարկ չենք համարում) մարդկանց գործն է, որ անձնական կրքերի արգիւնք է: Դա յայտնի է ամենքին, որոնք հետաքրքրվել են այդ գործով: Դա քաջ յայտնի է եւս «Արմէնիա» Մ. Փ. ին, որ եթէ անամօթ զորպարտութիւնների ու ամբաստանութիւնների մասնագիտութիւնն այնքան իւրացրած չը լինէր, գէթ մէկ անգամ իր թերթում եւ այդպիսի ծանր խնդրում մէկ անձոնի ու զգուշի վարմունք պակաս արած կը լինէր մեր դէմ:

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ.

Նրանք թուով քիչ չեն, մեր ներքին թշնամիները, եւ «Հնչակ» ու մեր կուսակցութեան անհրաժեշտ ժողովրդականութիւնը գիշեր-ցերեկ փուշերի պէս ներանց ծակոտում է եւ նրանց անոյշ ու հանգիտ քունը խանգարում: Մենք շատ ցաւում ենք այդ հանգամանքը, բայց ինչ արած, մենք անկարող ենք դրա դէմ մի դարման հասցնելու:

Մեր ներքին թշնամիները, սակայն, կարծում ենք, այդ դարմանի պէտքը չունեն, որովհետեւ իրանց բարոյական յատկութիւններին յարմարաւոր զէնքը ներանք միշտ գործածում են մեր դէմ՝ պատեհ թէ անպատեհ: Ամեն տեսակ կեղտոտ, ստոր ածականներ ու զրպարտութիւններ անդադար միր գլխին թափելուց յետոյ, — ածականներ ու զրպարտութիւններ, որոնք այնքան ճարտարաբան կերպով հաւատարիմ պատկերացումն են նոյն իրանց, մեր թշնամիների, էութեան, *) այդ մարդիկն աջողում են երբեմն իրանց քիթն իրանց գլխից վեր բարձրացնել: Օգտվելով այն հանգամանքից, որ անիշխանականներն այսօր ենթակայ են ընդհանուր հալածանքի, մեր թշնամիներն՝ իրանց մորթը պատռելու աստիճանի չափ՝ աջ ու ձախ մեզ ներկայացնում են իբրեւ անիշխանական: Նա, որ սովոր է ճշմարտութիւնասել ու խօսել եւ հետեւել է «Հնչակին», կարող է զլուանքով եւ միւսնոյն ժամանակ արհամարհական ծաղրով դիտել այդ մարդկանց խտրիզներին եւ յիշեցնել նրանց, որ անիշխանականութիւնը մենք միշտ համարել ենք իբրեւ գիտութեան հակառակ, ան-

*) Տես, օրինակ, «Հնչակ» ներկայ համարում զետեղված «Հերքում» վերնագրով պատասխանը:

հետեւ, սխալ, գրգռված մտքի ուսմունքներ եւ անիշխանական գոծականութիւնը նոյն այդ հիւանդոտ մտքերի հիւանդոտ արտայայտութիւն ու պտուղ: Կարծում ենք, մեր խօսքը պարզ էր եւ ո՛չ մի շփոթութեան առիթ չէր կարող տալ մեր ներքին թշնամիներին անգամ, որոնք, ի հարկէ, շատ լաւ գիտեն մեր այդ հայեացքը. . . Բայց բանը նրանումն է, որ մեզ փնասելու, մեր ոտի տակ հոր փորելու համար՝ նրանց աւելի ձեռնառու է իրանց ձեռքնել յիմար ու տիւար, որպէսզի գիւրութեամբ զրպարտեն մեզ, քան մնալ մարդկային բնական բանականութեամբ ու բարեխիղճ — եւ ճշմարտութիւնը խոստովանել: Այդ մարդիկն ընդունակ են միայն կեղտոտ, ստորաբարձ զէնքեր գործածել մեր դէմ, իրանց միակ խորհրդատու ունենալով իրանց ասիական ամեն ստոր կրքերն ու բնազդները: Եւ թէ եւ զգում ենք, որ անօգուտ է, բայց այնու աւելի մենայնիւ չենք կարողանում մեզ զսպել գայթակղութիւնից՝ խորհուրդ տալու այդ չափազանց անամօթ թշնամիներին հետեւալը. — Որպէսզի իրանց մտաւոր ու բարոյական սնանկութիւնը այնպիսի մերկութեամբ երևան չենէ, նրանք լաւ կանեն, եթէ քիչ նուազ անաղնիւ զէնքեր գործածեն մեր դէմ եւ բացարձակ մասնակից չը լինեն այն արիւնախում ու կատաղի հալածանքներին, որ գործադրում է մեր դէմ քանդվող վայրենի թիւրք կառավարութիւնը: Միւսնոյն ժամանակ նրանց խորհուրդ ենք տալիս թափ տալ իրանց մըտաւոր ծակ պարկը եւ եթէ մեր համոզումների ու հայեացքների հակառակ են, թող դրա մասին խօսեն ու վիճաբանեն մեզ հետ եւ ո՛չ թէ ամեն տեսակ խտրիզներ ու դաւեր լարեն, մեզ փնասել ջանալով: Թէ եւ ճիշտ է, որ մեր այդ խորհուրդն իրագործելու համար՝ մեր թշնամիներին պակասում է մի պարզ, թէպէտ շատ կարեւոր բան — ազնուութիւն:

Հասկանում են արդեօք այդ մարդիկը, թէ որքան ցածր դերի մէջ են գտնվում. . . Ո՛վ գիտէ. . . Մենք աւելորդ ենք համարում նրանց անունները տալ, որովհետեւ գիտենք, որ իրանք իրանց լաւ կը ճանաչեն, եւ ասում ենք. — A bon entendeur, salut! .

ԱՆՆ — ԵԱՆՑ.

ՀԱՆՈՒՄՆԵՐ, ՄԻՇՏ ՀԱՆՈՒՄՆԵՐ.

Հազիւ Աթէնքից դուրս եկած, որտեղ այնքան զըռուելի ու կատաղի հալածանքների ենթակայ էինք շարունակ թիւրք կառավարութեան կողմից, նոյն այդ նողկալի, կիսաբանգ, արիւնարբու կառավարութիւնն իր կատաղի ընթացքը շարունակեց մեր դէմ մինչեւ այստեղ լօնդօն: Ճանապարհորդութեան միջոցին անգամ շրջապատելով մեզ լրտեսներով, ներկայացնելով մեզ ֆրանսիական կառավարութեան իբրեւ համեմատական Եւրոպականներ, գիլիօտինի արժանի անձեր, անիշխանականներ՝ եւ այլն, այդ ասիական բռնակալ կառավարութիւնն աջողեց մեր դէմ թունաւորել ֆրանսիական, հանրապետական կոչված, կառավարութեան: Լրտեսներով պաշարել մեր բնակավայրը, լրտեսներ ընկերացնել մեզ փողոցներում, ուր որ գնայինք, մեր ամեն մի քայլափոխին, մանրակրկիտ խուզարկութիւններ

անել մեր գոյքերում, ամեն տեսակ նիւթական ծախսերի ու դժուարութիւնների մէջ գցել մեզ, — ոչինչ չը խնայեց Փրանսիական բուրժուազական վախկոտ կառավարութիւնն աջակցելու համար իր սիրելի, բայց սղեղ վայրենիին, թիւրք հարէմական կառավարութեան, որ հարէմ է դարձրել իր ամբողջ երկիրը: Ար թիւրքը մեզ հալածում է միշտ և մինչև իսկ ֆրանսիայում, դա հասկանալի է. յեղափոխական խօսքը և մանաւանդ յեղափոխական մարդը, ինչ ազգի էլ նա պատկանէ և որ կառավարութեան դէմ էլ որ լինի, այսօր սարսափ է աղբում Փրանսիական անամօթ կերպով անկած կառավարութեան վրայ: Ար աշխարհիս որ անկիւնում էլ ասես կը գտնվեն հայեր ևս, որոնք մեզ հայ յեղափոխականներիս, փաստելու համար՝ օգնութեան ձեռք կը տան մեր թշնամիներին, ուղղակի կամ կողմնակի կերպով և ամեն տեսակ վատ զգալարութիւններն որ վրայ բարդելով, — դա էլ, դժբաղդաբար, արդէն անցել է սովորական դէպքերի կարգը: Բայց այդ բոլորը լոկ այն հետեանքին կը յանգեն, որ կապացուցանեն նախ մեր թշնամի կառավարութեան սարսափն ու գողը և մեր ներքին թշնամիների բարոյական խորին անկումը և ապա նրանց աջակցող Փրանսիական կառավարութեան անամօթ ու երկչոտ ընթացքը:

Այդ վախկոտ հալածանքն իսկապէս մեզ պատիւ է բերում, ցոյց տալով թէ ամեն կիսաքանդ, լոկ իրանց գոյութիւնը պահպանելու ճիգ թափող բռնութեան ճանապարհի վրայ գտնվող, հնացած կառավարութիւններն ու հասարակութեան նոյնօրինակ տարրերը որ աստիճան մեր դէմ են հէնց այն պատճառով, որ մենք ձեռնածալ նստած և իրանց խնկարկող ու պաշտպան չենք, որ մենք խօսքով ու գործով միշտ մաքառում ենք բոլոր հնացածի ու բռնութեան դէմ յանուն նորի և ամենայն ազատութեան:

Թող թիւրքը, որքան կուզէ, շարունակէ իր հալածանքները, իր մօտալուտ անխուսափելի անկման վերջին ժամերում իրան օգնութեան կանչելով իրան արժանի բարեկամ կառավարութիւններին և հասարակութեան անբարոյականացած, ամեն կեղտոտութեան համար պատրաստ տարրերին, որոնց մէջ են նաև մեր հայ թշնամիները: Թիւրքն ինքը փորձով գիտէ, որ դա մեզ միշտ աւելի ու աւելի մեծ բարոյական ու հասարակական ոյժ է տվել և մեզ աւելի զօրացրել մեր մղած սուրբ կռւի համար: Կռիւր մեր կեանքն է. մենք ապրում ենք կռւի մէջ և կռւով է ու դրանից անբաժան ամեն կերպի նեղութիւններով ու տանջանքներով, որ մենք ի վերջոյ կը յաղթենք մեր ամեն տեսակ և ամեն կարգի ներքին ու արտաքին թշնամիներին և կը տանենք ժողովրդային դատի յաղթանակը:

Հինը պէտք է մեռնէ. և նա կը մեռնէ, տեղ տալով նորին:

ԱՎՆ — ԵԱՆՑՑ

ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԸ.

Պարսկաստանի Թաւրիզ քաղաքից մեզ հասած լուրերից քաղում ենք հետեւեալը. —

«Սուրբիս եպիսկոպոսը չը բաւականանալով մի քանի յեղափոխականների ձեռքից զենքեր խլել տալով ու

ծախելով, այժմ սկսել է հրապարակապէս կռիւ մղել նրանց դէմ: Յանդգնութիւնն այն աստիճանի է հասել, որ վերջիշած եպիսկոպոսը թոյլ է տվել իրան եկեղեցու մէջ իսկ, պատարագի ժամանակ արեղցվել հայհոյանքներ տեղալ առհասարակ յեղափոխականների եւ մասնաւորապէս Հնչակեանների դէմ:

«Սուրհուրդ ենք տալիս Հաջի-Յակոբի (Մակար կաթողիկոսի ծառայ) հաւատարիմ ու նման ընկերակից Սուրբիսին՝ չը յանդգնել այլ եւս իր անարժան շրթունքներով պղծել յեղափոխական սուրբ բեմը, որ անմերձեւալի պէտք է լինի զանազան Սուրբիսների, Աջդեանների եւ դրանց արբանեակների կամ պաշտպանների համար. . . »

Աւրախու թեաւ արձանագրում ենք այստեղ, որ Ամերիկայի Միացեալ Նահանգների այլ և այլ բաղաբնորում Հնչակեան Մասնաճիւղերը մեծ շուքով տօնել են Կոյոլի Յոյի ներկայ տարեդարձը: Ցաւում ենք, որ մեր տեղափոխութեան պատճառով անկարող եղանք իր ժամանակին զետեղել «Հնչակում» դրա մասին Ամերիկայից ստացած թղթ-թակցութիւնները:

Պուսակցութեանս Գանձարանում շնորհակալութեամբ ստացվել են հետեւեալ գումարները. —

ՌՈՒՍԱՍՏԱՆ. — Բ. . ք. ից Մէլիքի միջոցով մի խումբ երիտասարդներից 18 ր. Բ. ք. ի ՍԷ քաղից 10 ր., Զոցանից 35 ր. ևս 50 ր. Բ. ՍԷ ք. ի Կայծակ՝ խրբից 10 ր., Ա. Ծ. ից, Ա. օ ից 2-ական ր., Փնջից, Զանգից, Բուրբից մի-մի ր.: Նիշտարի հանգանակած՝ Միտաից 2 ր., Նաւթից, Խոտից մի-մի ր.: Կայծակից 25 ր.: Աջ վարժապետի միջոցով Բ. Ս. և Բ. ք. ների բանւորներից Աջ վարժապետ, Գայլ Կարապետ, Գալ Արզուման, Բաթման Ղըլճ և Ծեղուկներից 3-ական ր. Երկու գիւղացիք 2 ր.: ՍԷ ՕՐ, Թիւրի Գայլ Թաւատի, Ազատութիւն, Աստղիկ, Շէյթան թիւնի, Հայոց զօրք, Մանսուշակ, Անյայտ, Ծիծառ և Ն. . . ներից մի-մի ր.: Ոմն, Թիւնի Ապեր, Ֆրիդու, Հայի որդի, Գրօշակ, ՍԷ, Կարօ, և Կեղծ վաճառականներից 50-ական կոպէկ: Ալէքսան և Համբարձումից 45 կպ: Գրիգոր և Սանթուր, Յովհաննէս առաջին, Յովհաննէս երկրորդից, 1893 ամի Յուլիսի 30-ի ներից 40-ական կոպէկ: Անդին քառ, Օսեփ, Խաչի, Կայծակ վարժապետներից 30-ական կոպէկ: Մանուշարի Բաղ, Մարաս, Բեամբաղդ, Գեղեցիկ Օր, Կարմիր Աւետարան, Ընտանիքի Գրախտ, Առստան Գէօլա, Զումբուրտ, Ազատութիւնը սիրող Մէջտեղ ուտող, Օխէրօ, Բախտի կարօտ, Անտօն Պետրոսեան, Բագրաս, Գըրիգոր, Ոմն 20-ական կոպ: Անեկան Կուսից 25 կպ: Անդրու ձորը, Վանք, Հոռում Ա, Կաշկանդուած Գերի, Գալի Մահաբադ, Մի ոմն, Աթուհ 15-ական կոպ Բիւրդ Թթու և Պուռուսներից 10-ական կոպ:

Բ. . ք. ի Սուրբադը. Թեթ N-20 հաւաքված է 14 ր:

Բ. . ք. ի մի խումբ Ուսանողներից 20 ր:

ԱՄԵՐԻԿԱՅԻ Պրովիդէնս քաղաքի Գ. Կ. ից 3 դրար:

ԲՕԼԳԱՐԻԱ Սիլիսարէ քաղաքից Ա. Կ. ից 5 լէվա:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ, և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —

Londres. (Angleterre). — M. Beniard. Poste restante.